

«Հազարաւոր տարիներու դուք անարժան ժառանգորդներ
Օտարութեան եւ մոլութեան ճամբաներէն մեզի դարձէք»
ՍԻԱՄԱՆԹՈՒ, «Հայ դաշտերուն պաղատանքը»

Գ Լ ՈՒ Խ 10

Գործոնների միջազգային շարժը

Գործոնների միջազգային շարժի երեք հիմնական տեսակներն են օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ), պորտֆելային ներդրումները և աշխատանքի միգրացիան:

ՕՈՒՆ-ի դեպքում ներդրողն արտերկրում ձեռք է բերում իրական ակտիվ: Դա կարող է իրականացվել ինչպես գոյություն ունեցող բիզնես գնելու, այնպես էլ արտերկրում հող, սարքավորումներ գնելու, շինություններ կառուցելու միջոցով: Օրինակ՝ օտարերկրյա ուղղակի ներդրում է, երբ Հայաստանից ներդրողը Սոչիում ձեռք է բերում քյաբաբի արտադրող խորտկարանի բաժնետոմսերի 50%:

Պորտֆելային ներդրողն արտերկրում ձեռք է բերում ֆինանսական կապիտալ: Եթե ՕՈՒՆ-ի դեպքում ներդրողը հնարավորություն ունի մասնակցել ձեռնարկության կառավարմանը, ապա պորտֆելային ներդրման դեպքում ներդրողը նման հնարավորություն չունի, քանի որ ներդրման կշիռը փոքր է (բաժնետոմսերի նվազ քան 10%): Պորտֆելային ներդրողի նպատակը շահաբաժնի ստացումն է: Պորտֆելային ներդրման օրինակ է, երբ Սիկտիվկարից ներդրողը \$8.7 մլրդ-ով ձեռք է բերում «Gilead Sciences» բիոտեխնոլոգիական ընկերության բաժնետոմսերի 9% (համեմատության համար Հայաստանի ՀՆԱ շուրջ \$10 մլրդ է):

Աշխատանքի միգրացիան աշխատանք ռեսուրսի տեղաշարժն է մեկ այլ երկիր: Հանգամանք, որը ցավալիորեն բնութագրական է հայ իրականությանը: 17-րդ դարի կեսին Առաքել Դավրիժեցին ցավով գրում է. «Ամենայն ազգն Հայոց էլեալք վտարանդիք եղեն յիւրաքանչիւրոց տեղեաց եւ հայրենեաց եւ բնակութեանց եւ յաշխարհաց, եւ տարադէմ գնացեալ ընդդէմ երեսաց, ցիրեցան եղեալք սփռեցան ընդ ամենայն աշխարհ»:

Այս գլխում կվերլուծենք գործոնների միջազգային շարժի տնտեսական հետևանքները: Հիշենք, որ արտաքին առևտրի նախորդ մոդելներում ռեսուրսների միջազգային շարժը մշտապես բացառել ենք:

■ Միգրացիան աշխարհում

1990թ-ից ի վեր Հայաստանից արտագաղթել է ավելի քան մեկ միլիոն մարդ:

Համաաշխարհային բանկի գնահատմամբ (WB, 2016) աշխարհում շուրջ 250 մլն մարդ գաղթական է (բնակվում է ոչ այն երկրում, որում ծնվել է), ինչը երկրագնդի բնակչության 3.4% է: Գաղթի հինգ հիմնական ուղղություններն են ԱՄՆ-ն, Սաուդյան Արաբիան, Գերմանիան, Ռուսաստանը, ԱՄԷ-ն:

Բնակչության թվում արտագաղթածների կշիռն ամենաբարձրն է Պաղեստինում՝ 96%: Այդ կշիռը բարձր է նաև Անտիգուա Բարբուդայում (63%), Տրինիդադ-Տոբագոյում (28%), Հայաստանում (26.3%) (WB, 2016):

Իսկ ներգաղթածների կշիռը բարձր է Քաթարում (91%), ԱՄՆ-ում (88%), Քուվեյթում (72%), Սաուդյան Արաբիայում (48%), Սինգապուրում (43%): Հատկանշական է, որ այդ բոլոր երկրները միապետություններ են (Սինգապուրը սոսկ ձևականորեն է դեմոկրատիա), և այդ բոլոր երկրներում միջին եկամուտը բարձր է: Ներգաղթյալների բարձր կշիռը և բարձր եկամուտը մեծ չափով բացատրում են այդ երկրներում ավտորիտար համակարգի հարաբերական կայունությունը: Բնակչության զգալի մասը պաշտպանում է ավտորիտար համակարգը, քանի որ խուսափում է ներգաղթյալներին քաղաքական իրավունքներ տրամադրելուց:

Գաղթականների հիմնական մատակարարներն են Հնդկաստանը (16մլն), Մեքսիկան (12մլն) Ռուսաստանը (11մլն), Չինաստանը (10մլն), Բանգլադեշը (7մլն), Ուկրաինան (6մլն), Պակիստանը (6մլն), Ղազախստանը (4մլն) (UN, 2015) (բնակչության թվում արտագաղթյալների հարաբերական քանակով Հայաստանը միջազգային շուկայում ավելի խոշոր մատակարար է, քան օրինակ՝ Ռուսաստանը):

Բնակչության արտագաղթի հետ ուղղակիորեն կապված է դրամական միջոցների փոխանցումը հայրենիք, ինչը որոշ երկրների համար եկամտի նշանակալի աղբյուր է: 2015թ-ին այդ փոխանցումները զարգացող երկրներում կազմել են \$432մլրդ: Ընդ որում, զարգացող երկրներում այդ փոխանցումների ներհոսքը համարժեք է, իսկ երբեմն գերազանցում է ՕՈՒՆ-ի ներհոսքին:

Փոխանցումների հիմնական ստացողներն են Հնդկաստանը (2015թ-ին \$72մլրդ), Չինաստանը (\$64մլրդ), Ֆիլիպինները (\$30մլրդ) և Մեքսիկան (\$26մլրդ): Իսկ փոքր տնտեսությամբ որոշ երկրներում փոխանցումները ՀՆԱ-ի համեմատ խիստ նշանակալի են, օրինակ՝ Տաջիկստանում (42%), Ղրղզստանում (30%), Մոլդովայում (26%), Հայաստանում (18%), Վրաստանում (12%):

Հայաստան փոխանցումների ներհոսքը 2015թ-ին կազմել է \$1.7մլրդ (ՀՆԱ-ի 18%-ը), Վրաստան՝ \$1.6մլրդ (ՀՆԱ-ի 12%-ը), Ադրբեջան՝ \$1.5մլրդ (ՀՆԱ-ի 2.8%-ը):

Աշխատանքի միջազգային շարժը

Աշխատանք ուեսուրսը տեղաշարժվում է տնտեսական, նաև քաղաքական, կրոնական, էթնիկական և այլ պատճառներով: Սակայն տեղաշարժի տիրապետող շարժառիթը տնտեսականն է, ուստի կհամարենք, որ աշխատանք ուեսուրսը տեղաշարժվում է այլ երկիր, եթե այնտեղ վարձատրությունն ավելի բարձր է:


Գծ. 10-1-ում $O_A O_B$ -ն A և B երկրներում աշխատանք ուեսուրսի ընդհանուր քանակն է, ուղղահայաց առանցքները համապատասխան երկրում աշխատավարձի դրույքներն են, իսկ VMP ուղիղները համապատասխան երկրում աշխատանքի սահմանային արդյունքի արժեքներն են: Վերջինները վարընթաց են նվազող սահմանային հատուցյի հետևանքով: Հիշենք, որ կատարյալ մրցակցային շուկայում սահմանային արդյունքի արժեքը հավասար է ուեսուրսի վճարին:

Սկզբնապես, նախքան աշխատանք ուեսուրսի տեղաշարժը A-ում աշխատանքի քանակը $O_A L_0$ է, B-ում՝ $O_B L_0$: Համապատասխանորեն՝ աշխատավարձի դրույքը A-ում W_{A0} է, B-ում՝ W_{B0} : Աշխատավարձը A-ում B-ի համեմատ բարձր է աշխատանքի սահմանային արտադրողականության բարձր լինելու շնորհիվ:

Ընդհանուր թողարկման (եկամտի) արժեքը A-ում սկզբնապես $O_A z e L_0$ է, B-ում՝ $O_B p n L_0$: A-ի ընդհանուր եկամտի $O_A W_{A0} e L_0$ մասը բաժին է ընկնում աշխատանքին, իսկ $W_{A0} z e$ մասը՝ կապիտալին: Նմանապես՝ B-ի ընդհանուր եկամտի $O_B W_{B0} n L_0$ մասը աշխատանքի բաժինն է, իսկ $W_{B0} p n$ մասը՝ կապիտալին:

Երբ աշխատանքի միջազգային ազատ շարժն արտոնվի, ապա այն B-ից կտեղաշարժվի A, քանի որ A-ում աշխատավարձը բարձր է: Ընդ որում այդ շարժը կշարունակվի այնքան, մինչև աշխատավարձերը երկու երկրներում հավասարվեն: Արդյունքում՝ L_0L_1 քանակի աշխատանք ռեսուրս B-ից կտեղաշարժվի A:

Քճանկար 10-1:
Աշխատանքի միջազգային շարժը



Նոր հավասարակշռությունը e' -ում է, որում երկու երկրների աշխատավարձերը հավասարվել են. $w_{A1} = w_{B1}$: Ռեսուրսի տեղաշարժից հետո թողարկման ընդհանուր արժեքը A-ում $O_Aze'L_1$ է, իսկ B-ում՝ $O_Bpe'L_1$:

Համաշխարհային եկամտի տեսանկյունից ռեսուրսի տեղաշարժը բարենպաստ է, քանի որ այն ընդլայնվել է nee' եռանկյան չափով: Համաշխարհային եկամուտն աճել է, քանի որ տեղաշարժված L_0L_1 ռեսուրսը A-ում ավելի արտադրողական է, քան B-ում, ինչի վկայությունն է սահմանային արդյունքի արժեքների տարբերությունը (L_0L_1 հատվածում $VMP_{LA} > VMP_{LB}$): Տեղաշարժված L_0L_1 աշխատանքը B-ում ստեղծում էր $L_0ne'L_1$ արժեք, այնինչ A-ում ստեղծում է $L_0ee'L_1$ արժեք: Տարբերությունն էլ՝ nee' , կազմում է համաշխարհային եկամտի հավելածը:

Ինչո՞ւ է միևնույն ռեսուրսը մի երկրում ավելի արտադրողական, քան մյուսում:
Պատճառը նախ և առաջ քաղաքական և տնտեսական ինստիտուտներն են: Աշխատանքի արտադրողականությունը պայմանավորվում է ոչ միայն հմտություններով, այլև այն միջավայրով, որում գործում է: Միջավայրի բաղադրիչներից են սեփականության, հեղինակային, պայմանագրային, ընտրական և այլ իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների առկայությունը:
Այդ պատճառով բիզնեսներ և սթրիվչոբներ դառնում են ԱՄՆ-ում և ոչ թե օրինակ՝ Ռուսաստանում: Մեր շուրջ պոտենցիալ բիզնեսներ կան, որոնք դատապարտված են երբեք փաստացի Բիլ Գեյթս չդառնալու:

Աշխատանքի տեղաշարժից նախ և առաջ, բնականաբար, շահում է տեղաշարժված L_0L_1 ռեսուրսը: Նրա եկամտի գուտ աճը $nm'e'q$ է:

Աշխատանքի ներհոսքը շահեկան է նաև A երկրի կապիտալի սեփականատերերին, քանի որ կապիտալի արտադրողականությունը բարձրանում է: Նախքան ներգաղթը կապիտալի վարձատրությունը A-ում $w_{A0}ze$ էր, ներգաղթից հետո՝ $w_{A1}ze'$ է:

Աշխատանքի ներհոսքից, սակայն, տուժում է մինչ այդ երկրում առկա աշխատանք ռեսուրսը: Վերջինի վարձատրությունը w_{A0} -ից նվազում է w_{A1} , իսկ ընդհանուր եկամուտը կրճատվում է $w_{A1}w_{A0}em$ -ով: Այդ պատճառով ամենուր բնակչությունը դեմ է ներգաղթին:

Դրա դրսևորումներից է նեոֆաշիստական տրամադրութիւնների արմատավորումը Ռուսաստանում, Հունաստանում, Գերմանիայում, Հունգարիայում և այլուր:

Նկատենք՝ A-ում տեղի է ունենում եկամտի վերաբաշխում հօգուտ կապիտալի. կապիտալի իրական եկամուտը բարձրանում է, աշխատանքինը՝ նվազում:

Իսկ ինչպե՞ս է աշխատանքի տեղաշարժն ազդում ծագման երկրի վրա: Արտագաղթի պատճառով B-ում կապիտալի սեփականատերերի եկամուտը նվազում է $ne'_{WB_1WB_0}$ -ով: Աշխատանքի արտագաղթի պատճառով կապիտալի սահմանային արդյունքը և հետևաբար՝ իրական եկամուտը նվազում են:

Միևնույն ժամանակ, B-ում մնացած (հայրենի հողին կառչած, հայրենիքին չդավաճանած) աշխատանք ռեսուրսի (փառք ու պատիվ իրեն) եկամուտն ընդլայնվում է $qe'_{WB_1WB_0}$ -ով, քանի որ B-ում աշխատավարձը WB_0 -ից բարձրանում է WB_1 :

Իրանով իսկ՝ B-ում տեղի է ունենում եկամտի վերաբաշխում հօգուտ աշխատանքի. աշխատանքի իրական եկամուտը բարձրանում է, կապիտալինը՝ նվազում:

Արդյունքում՝ աշխատանք ռեսուրսի տեղաշարժից շահում է ինքնին տեղաշարժված ռեսուրսը, այնուհետև՝ հյուրընկալ երկրի կապիտալը և ծագման երկրում մնացած աշխատանքը: Տուժում է հյուրընկալ երկրի աշխատանքը և ծագման երկրի կապիտալը:


Համաշխարհային տնտեսութիւնը, սակայն, շահում է: Զուտ շահը nee' , որից nme' բաժին է ընկնում տեղաշարժված աշխատանքին, իսկ mee' բաժին է ընկնում հյուրընկալ երկրի կապիտալին:

Ծագման երկիրը կարող է արտագաղթյալներից ակնկալել նաև որոշ տրանսֆերտներ:

Կապիտալի միջազգային շարժը

Կապիտալի շարժը կարող ենք վերլուծել նույն կերպ: էական տարբերութիւնն այն է, որ կապիտալի շարժի դեպքում ռեսուրսի տեղը կարող է չտեղափոխվել: Օրինակ՝ երբ ուզեկ ենք դրողը գնում է ամերիկյան ընկերութիւնն բաժնետոմսեր, պարտադիր չէ, որ մեկնի ԱՄՆ (առավել ևս, որ նրան մուտքի անցագիր կարող են չտալ): Արդյունքում՝ ներդրումից ստացված եկամուտն ամբողջութեամբ (հանած հարկերը) կարող է վերագառնալ ծագման երկիր: Այնինչ աշխատանքի շարժի դեպքում արտերկրում ստացված եկամտի զգալի մասը ծախսվում է տեղում: Անշուշտ շրջահայաց ուզեկը արտերկրում ստացած եկամուտները դժվար թե հայրենիք տեղափոխի, քանի որ մի օր նրան կարող են հարստահարել: Ավելի շուտ այդ գումարները նա ապահով կտեղաբաշխի շվեյցարական պարտատոմսերում:

Գծանկար 10-2:
Կապիտալի միջազգային շարժը



Այսպես, երբ վճարի տարբերութիւնն ($r_{A0} > r_{B0}$) պատճառով K_0K_1 քանակի կապիտալը B-ից տեղաշարժվում է A (գծ. 10-2), կապիտալի սեփականատերերը կարող են մնալ B-ում:

Այդ դեպքում՝ տեղաշարժված կապիտալի եկամուտը՝ $K_0me'K_1$, թեպետ ստեղծվում է A-ում, բայց պատկանում է B-ին: Հետևաբար՝ A երկիրը շահում է միայն me' եռանկյան չափով, որը բաժին է ընկնում A-ի աշխատանք ռեսուրսին և հետևանք է A-ում աշխատանքի արտադրողականության աճի:

Կապիտալի ներհոսքի պատճառով A-ում առկա կապիտալի սեփականատերերը կորցնում են, քանի որ կապիտալի գինը A-ում կրճատվում է, սակայն աշխատանք ռեսուրսը, ինչպես նշեցինք, շահում է:

B երկրի աշխատանք ռեսուրսը, ընդհակառակը, կապիտալի արտահոսքի պատճառով կորցնում է, քանի որ կրճատվում է աշխատանքի արտադրողականությունը, թեպետ B-ում մնացած կապիտալը շահում է, քանի որ վարձատրությունը բարձրանում է:

Այսպիսով, երբ երկրներում ռեսուրսի վճարի տարբերությունը պայմանավորված է արտադրողականության տարբերությամբ, ռեսուրսի տեղաշարժից համաշխարհային արտադրությունն ընդլայնվում է: Նկատենք նմանությունը համեմատական առավելության սկզբունքով մասնագիտացման հետ: Երկու դեպքում էլ համաշխարհային արտադրությունն ընդլայնվում է ռեսուրսների առավել օպտիմալ բաշխման արդյունքում՝ առանց ռեսուրսների պաշարի աճի կամ արտադրության տեխնոլոգիայի բարելավման:

Գործոնային եկամուտների հարկումը

Եկամտահարկի ու շահութահարկի դրույքը զրո է Բահամներում, Բահրեյնում, Մալդիվներում, Քաթարում, ԱՄԷ-ում, Վանուատուում: Իսկ Քուվեյթում, Բրունեյում, Օմանում զրո է միայն եկամտահարկի դրույքը: Հարկումը շատ ցածր է նաև Սաուդյան Արաբիայում, որտեղ նշյալ դրույքները 2.5% են:

Աղյուսակ 10-1:

Հարկման դրույքները որոշ երկրներում 2015թ-ին

	Եկամտահարկի դրույք (%)	Շահութահարկի դրույք (%)	Հարկերի կշիռը ՀՆԱ-ում (%)	Կառավարության ծախսերի կշիռը ՀՆԱ-ում (%)	Մաքսատուրք (%)
Ռուսաստան	13	20	35	38.2	6.3
Հայաստան	36	20	23	25.4	2.2
Վրաստան	20	15	25	28.7	0.7
Կիպրոս	35	12.5	32	41.9	1
Ադրբեջան	25	20	13	38	4.6
ԱՄՆ	39.6	35	25	39	1.5
Ֆրանսիա	45	34.3	45	57	1
Գերմանիա	47.5	15.8	37	44	1
Հոլանդիա	52	25	37	47	1
Շվեդիա	57	22	43	53	1

Մաքսատուրք - առևտրով կշռված մաքսատուրքի միջին դրույքը:

Եկամտահարկի դրույք, Շահութահարկի դրույք - համապատասխան հարկի առավելագույն դրույքը:

Աղբյուրը՝ 2016 Index of Economic Freedom, The Heritage Foundation.

Պարզեցինք՝ երբ ռեսուրսի վճարը տարբեր է արտադրողականության տարբերության պատճառով, ռեսուրսի միջազգային շարժից համաշխարհային արտադրությունն ընդլայնվում է: Սակայն ռեսուրսի վճարի տարբերությունը կարող է պայմանավորված լինել նաև հարկման դրույքների տարբերությամբ: Օրինակ՝ եկամտահարկի առավելագույն դրույքը Ռուսաստանում 13% է, Հայաստանում՝ 36%: Հետևաբար՝ այլ հավասար պայմաններում, այդ թվում, երբ արտադրողականությունը նույնն է, աշխատուժը Հայաստանից Ռուսաստան տեղափոխվելու դեպքում շահում է: Բայց

ռեսուրսի այդ տեղաշարժից համաշխարհային արտադրութիւնը կրճատվում է, ոչ թե՛ ընդլայնվում:

Գծ. 10-3-ում նկարագրվում է այն դեպքը, երբ արտադրողականութիւնների տարբերութեամբ պայմանավորված տեղաշարժն արդեն տեղի է ունեցել, և երկրների միջև աշխատանք ռեսուրսի բաշխումը համապատասխանում է L_0 կետին: Երկու երկրներում աշխատավարձերը հավասար են, և ռեսուրսն այլևս չի տեղաշարժվի:

Ենթադրենք՝ A երկիրը սահմանում է եկամտահարկ t_A դրույքով ($0 < t_A < 1$): Նախքան հարկի սահմանումը աշխատավարձը W_{A0} էր: Հարկի սահմանումից հետո աշխատավարձը՝ հարկը վճարելուց հետո կկազմի $W_{A0}(1 - t_A)$: Վերջինը ցածր է B -ում աշխատավարձից՝ W_{B0} , և այդ պատճառով L_0L_1 քանակի աշխատանք A -ից կտեղափոխվի B ՝ հարկումից խոստահելու համար: Արդյունքում՝ երկու երկրներում աշխատավարձերը դարձյալ կհավասարվեն:

2013թ-ին Ֆրանսիայում եկամտահարկի դրույքը բարձրացվեց 75%՝ 1մլն եվրոյից բարձր եկամուտ ունեցողների համար: 2012թ-ի սեպտեմբերին, երբ հայտնի դարձավ, որ նախագահը մտադիր է կիրառել այդ ուղղորդող դրույքը, Ֆրանսիայի ամենահարուստ մարդը՝ Բերնար Արնոլտը, շտապ բելգիական քաղաքացիութիւն ստանալու դիմում տվեց: Նույն պատճառով Դեպարտյեն ձեռք բերեց Ռուսաստանի քաղաքացիութիւն՝ դառնալով Պուտինի ու Կադիրովի մտերիմը:

Այդ անմիտ հարկը, սակայն, երկու տարվա կյանք ունեցավ, և 2015թ-ին հանվեց: Ֆրանսիայի նախագահը վերջապես գիտակցեց, որ կրակում է իր իսկ ոտքերին, քանի որ պոտենցիալ հարկատուները փախչում են Ֆրանսիայից:

Նկատենք՝ թեպետ ռեսուրսը տեղաշարժվում է աշխատավարձերի տարբերութեան պատճառով, բայց այդ տարբերութիւնը ոչ թե արտադրողականութեան, այլ հարկման դրույքների տարբերութեամբ է պայմանավորված: Այդ պատճառով, թեպետ տեղաշարժվող ռեսուրսը շահում է (հակառակ դեպքում այն չէր տեղաշարժվի), սակայն համաշխարհային եկամուտը կրճատվում է $ne'e$ եռանկյան չափով:

Եկամուտը կրճատվում է, քանի որ տեղաշարժվող ռեսուրսի սահմանային արդյունքը B -ում ավելի փոքր է, քան A -ում (L_0L_1 հատվածում $VMP_{LB} < VMP_{LA}$): Տեղաշարժի հետևանքով A -ում թողարկումը կրճատվում է $L_1e'eL_0$ չափով, իսկ B -ում ընդլայնվում է L_1neL_0 -ի չափով:

Նոր հավասարակշռութիւնում A -ում մնացած աշխատանք ռեսուրսի աշխատավարձը՝ նախքան հարկը վճարելը W_{A1} , իսկ հարկը վճարելուց հետո՝ $W_{A1}(1 - t_A)$: Վերջինը թեպետ ցածր է աշխատավարձի նախկին՝ W_{A0} , մակարդակից, սակայն աշխատավարձն ավելի ցածր կլինի, եթե ռեսուրսը չարտագաղթեր. այդ դեպքում աշխատավարձը կկազմեր $W_{A0}(1 - t_A)$:


Աշխատանքի արտահոսքի հետևանքով A երկրի կապիտալի արտադրողականութիւնը նվազում է, և կապիտալի սեփականատերերի ընդհանուր կորուստը կազմում է $W_{A0}W_{A1}e'e$:

Միևնույն ժամանակ, A երկրում եկամտահարկից պետական բյուջեի մուտքերը կազմում են $[W_{A1}(1 - t_A)]W_{A1}e'n$: Նկատենք՝ արտագաղթելու հնարավորութիւնը սահմանափակում է բյուջեի հարկային եկամուտները. եթե ռեսուրսը չարտագաղթեր, ապա հարկային եկամուտները կկազմեին $[W_{A0}(1 - t_A)]W_{A0}e'n$:

B երկրի «տեղական» աշխատանք ռեսուրսը կորցնում է $qeW_{B0}W_{B1}$ չափով, քանի որ ռեսուրսի ներհոսքի պատճառով աշխատավարձը կրճատվում է: Սակայն շահում են B երկրի կապիտալի սեփականատերերը, քանի որ լրացուցիչ աշխատանք ռեսուրսը

բարձրացնում է կապիտալի արտադրողականությունը. ընդհանուր շահը հավասար է $n e w_{B0} w_{B1}$:

Գծանկար 10-3:
Եկամտի հարկումը



Այսպիսով՝ համաշխարհային տնտեսության տեսանկյունից հարկման դրույքների տարբերությամբ պայմանավորված ռեսուրսների տեղաշարժն անարդյունավետ է:

■ **Կրկնակի հարկումը**

ՀՀ ռեզիդենտի արտասահմանում ստացած եկամուտը և ոչ ռեզիդենտի՝ հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտը հարկվում են Հայաստանում: Միևնույն ժամանակ, այդ եկամուտները կարող են հարկվել արտասահմանում: Իսկ միևնույն եկամտի կրկնակի հարկումը, բնականաբար, արգելակում է ներդրումները:

Հայաստանը շուրջ 40 երկրների հետ ունի եկամտի կրկնակի հարկումը բացառելու համաձայնագիր, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իտալիայի, Իրանի, Կանադայի, Հնդկաստանի, ՄԲ-ի, Նիդերլանդների, Շվեյցարիայի, Չինաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Ֆրանսիայի հետ: ԱՄՆ-ի հետ դեռևս նման համաձայնագիր չի կնքվել:

Ընդհանրապես՝ ֆիզիկական անձը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ բնակվում է (ՀՀ օրենսդրությամբ՝ որտեղ գտնվում է ավելի քան 183 օր), իսկ իրավաբանական անձը՝ որտեղ գործում է: Այսինքն՝ բազմազգային ընկերությունները միաժամանակ մի քանի երկրների ռեզիդենտ են:

Երկրները սովորաբար կիրառում են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մշակած կրկնակի հարկումը բացառելու տիպային համաձայնագիրը, որը առավելությունը տալիս է եկամուտ ստացողի ռեզիդենտությանը: Մյուս տիպային տարբերակը մշակել է ՄԱԿ-ը, որն առավելությունը տալիս է եկամտի ստացման աղբյուրին:

Կրկնակի հարկումը բացառելու համար երկիրն իր ռեզիդենտի հարկային պարտավորությունները կրճատում է արտերկրում վճարած հարկի չափով: Օրինակ՝ եթե Ռուսաստանում (որտեղ ՀՀ ռեզիդենտը եկամուտ է ստացել) եկամտահարկի դրույքը 13% է, իսկ ՀՀ-ում՝ 36%, ապա եկամուտը ՌԴ-ում կհարկվի 13%-ով, իսկ ՀՀ-ում 23%-ով: Արդյունքում՝ եկամուտը կհարկվի երկու երկրների առավել բարձր դրույքով:

Տերմիններ

Քաղթական, (migrant), մարդ, որը բնակվում է ոչ իր ծագման երկրում:

Գործոնային եկամուտ, (factor income), *ռեսուրսի՝ աշխատանքի կամ կապիտալի ծառայությունների դիմաց ստացած եկամուտը*:

Գործոնային եկամտի հարկ, (factor income tax), *հարկ, որը սահմանվում է աշխատանքի կամ կապիտալի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների նկատմամբ: Համարժեք է եկամտահարկին և շահութահարկին, որոնք այլ կերպ կոչվում են ուղղակի հարկեր:*

Ուղղակի հարկ, (direct tax), *հարկ, որը սահմանվում է որևէ տեսակի եկամտի նկատմամբ: Տարբերվում է անուղղակի հարկից (indirect tax), որի օրինակ է ավելացված արժեքի հարկը (Հայաստանում, Ռուսաստանում, Եվրոպայում) կամ վաճառքի հարկը (ԱՄՆ-ում): Առևտրային քաղաքականությունում հարկերի այս տարանջատումը էական է, քանի որ միջազգային առևտրային իրավունքով արտահանողին ուղղակի հարկերի վերադարձը համարվում է անօրինական լրավճար, իսկ անուղղակի հարկերի վերադարձն արտոնվում է:*

Կրկնակի հարկում, (double taxation), *միևնույն եկամտի հարկումը տարբեր երկրներում: Եկամտի կրկնակի հարկումը տեղի է ունենում, երբ մի երկրի ռեզիդենտը եկամուտ է ստանում մեկ այլ երկրում, և այդ երկու երկրները հարկում են ինչպես իրենց տարածքում ստացած եկամուտը, այնպես էլ իրենց ռեզիդենտի գլոբալ եկամուտը: Քանի որ կրկնակի հարկումը խոչընդոտում է կապիտալի միջազգային հոսքին, ապա բազմաթիվ երկրներ ունեն կրկնակի հարկումից խուսափելու պայմանագրեր:*

Գրականություն

Markusen, J. R., Melvin, J. R., Kaempfer, W. M., & Maskus, K. (1994). *International Trade: Theory and Evidence*. McGraw-Hill/Irwin.

Neumayer, E. (2007). Do double taxation treaties increase foreign direct investment to developing countries? *Journal of Development Studies* , 43 (8), 1501-1519.

UN (2015), Trends in international migration, *Population Facts*, #2015/4.

WB (2016), *Migration and Remittances Factbook 2016*, World Bank.

WB (2016), *Migration and Development Brief, #26*, World Bank.

Yarbrough, B., & Yarbrough, R. (2000). *The World Economy: Trade and Finance*. Harcourt College.